I-376

№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1897

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղբիւր № I

Երջանիկներ. (Աղբիւրի ալբոմ)։ Մանկական հանդէս։—† Մուշեղ Մամիկոնեան։ Եվևնու զրոյցը։—Մարուկ։ Պատժւած Սիրանոյշը, (պատկեր) Հայրենասէր մանուկը, փոխադր. Ար. Ամիրեան։ Ծաղրածւի առասպելները (կաղանդի նորավէպ) թարգմ. Գ. Բաբուրեանց։ Երգչին (ոտանաւոր) Աթ. Խնկոյեանց։ Ոմբագոծութիւն ձիւնով, ձիւնագնդի (պատկեր) Կայծ Ոգի (ծնդեան հէքիաթ) Ջ. Տ.—Գ.։ Փոքրիկ հիւանդապահը.—Ե. Թ. *** (Ոտանաւոր)—Գ. Գոլոշեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՒԵՍՏ

Սկզբնական ծանօթ. բուսաբանութեան մասին, Վարդի քոյրերը Ա. Ք.

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

I. Երջանիկներ։ II Պատժւած Սիրանոյշը։ III Ձիւնագնդի։

ՋԻԱՐԱԼԻՔ

Հանելուկներ։ Թւաբանական խնդիր։ Զուտասելուկ։ Արջերի որսը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Միքայէլ Նալբանդեանցի *ֆոտօ-գրաւիւր* և Մայրիկի ճնշարանում *խրոմօ-օլէօգրաֆիա* պատկերները Աղբիւրի այս №-ի հետ ուղարկւում է ներկայ 1897 թ. Աղբիւր-Տարազի այն բաժանորդներին, որոնք լրիւ վճարել են իրանց բաժանորդագինը՝ 10 ր.։

Տարազի անցեալ № 4-ի հետ ուղարկւել է արդէն Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին Հարեմի-աղջիկը ոսկի շրթաներում պատկեր-օրացոյցը և Պարիզի մոդաներ—յունւար։

Աղբիւրի այն բաժանորդը, որ Տարազ չէ ստանում և կամենում է ունենալ Միքայէլ Նալբանդեանի, Մայրիկի ճնշարանում և Հարեմի-աղջիկը ոսկէ շրթաներում պատկերները, կարող է ստանալ, վճարելով այդ երեք պատկերների համար 2 ր.։

Մի որևէ է պատճառով պրէմիա ընդունողը պէտք է իր պահանջը յայտնէ պոստի միջոցով, հակառակ դէպքում նրա պահանջը կըմնայ մեր կողմից առանց ընդառաջութեան։

Պրէմիանները մենք պոստ ենք յանձնում և առնում ստացական. թիւրիմացութեան դէպքում բաժանորդը գրաւոր պէտք է իր պահանջը յայտնէ, որ կարողանանք եւ մենք ստուգել ու պահանջել պոստից ընդառաջութիւն։

Աղբիւրի ներկայ №-ը ուղարկւում է միմիայն նրանց, որոնք բաժանորդ են դրւել և կամ նորոգել են իրանց բաժանորդագրութիւնը այս 1897 թ. համար։

Ապառիկ բաժանորդագրութիւն Աղբիւրի կամ Տարազի համար ոչ մի պայմանով չենք ընդունում։

Աղբիւրի ալիքով „Երջանիկներ“ Նուէրաար 1897.

ԳԱՂԿԵՐԱՋԱՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
եւ յաւելած դաստիարակների համար
XV ՏԱՐԻ № 1 · ՅՈՒՆՈՒԱՐ 1897 Թ.

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՆԳԷՍ

«Նոր տարու» առթիւ

Մաճուկ (երգում է)

Արդէն տարին կատարեց
Իր սահմանուած շրջանը,
Հնացել է, պառաւել,
Հասել է իր վախճանը։
Եկէք, մատաղ ընկերներ,
Հրաժեշտ տանք մեր ծերին
Եւ դիմաւորենք ընդունենք
Նրա յաջորդ՝ նոր հիւրին։

Մաճուկ. խմբեր.

Ահա գալիս ենք փոքրիկ խմբերով,
Որ քեզ, հին տարի՛, ճանապարհ դնենք.
Եւ մաքուր սիրով, յոյս ու հաւատով
Դէպի նոր տարի՝ դէպ նոր կեանք դիմենք։

Սիրում ենք նորը, թարմն ու կենսատուն,
Ատում փթած, հին, ճնշող չարիքները,
Բայց երախտապարտ ենք և հներին,
Որ տվին մեզ կեանք, անթիւ բարիքներ։
(Չաւաքւում են հին տարու շուրջը).

Հին տարի (երգում է)

Այլևս ապրել անկարող եմ,
Ծերացած եմ ու տկար,
Կեանքիս վերջին ժամը հնչեց,
Ինձ պէտք է հանդիստ-դադար։
Ես իմ պարտքը կատարեցի
Մեծ օրէնքի համաձայն,
Եւ անպարտ եմ, որ բախտաւոր
Բոլոր մարդիկ չըդարձան։
Թէև դժւար է բաժանւել
Ձեզնից, սիրուն մանուկնե՛ր,
Բայց չեմ կարող ես չըպահել,
Աստծու անխախտ օրէնքներ։
Պէտք է անցնի, փոխւի հինը,
Որ տեղ բացւի նորերին.
Ես էլ կ՚երթամ, կըհեռանամ,
Որ ծաղկի ձեզ նոր տարին։
Մնա՛ք բարով, մնա՛ք բարով,
Ազնիւ, անմեղ երեխե՛ք,
Թէ ինձանից օգուտ տեսաք,
Յիշեցէք ու մի՛ տխրէք։

Ա. ԽՈՒՄԲ.

Դու պարգևեցիր մեզ գարթ գարուն,
Անուշիկ զեփիւռ, ծաղիկներ սիրուն,
Պայծառ, ճոխ առաւ, զով աչուն նախշուն,
Զարճալի ձմեռ՝ ձիւնով չողչողուն։

Բ. ԽՈՒՄԲ.

Գնա՛ բարով, հին, բազմափորձ տարի՛,
Գոհ ենք, որ առանք նորանոր փորձեր,
Բարի ճանապա՛րհ, ալեզա՛րդ պառաւ,
Կըլիշենք միշտ քեզ և քո լաւ գործեր։

ՀԻՆԳ ՏԱՐԻ.

Վերջին համբո՛յր, վերջին համբո՛յր
Տէ՛ր, խնդրեմ, մանուկնե՛ր,
Ծեր բերանով ձեզ կըմաղթեմ,
Այժ ու եռանդ, չաստ օրեր։
Ծաղկիք, փթթիք ու զարդարուիք,
Շնորհքներով գեղանի
Եւ մեծ գործքով դառնաք անմահ,
Փառք ու պարծանք հայրենի։

ԽՄԲԵՐ.

Ամէ՛ն, ամէ՛ն, թո՛ղ մեզ վըրայ
Օրհնութիւնդ կատարի.
Շնորհակալ ենք քեզմանից,
Գնա՛ բարով, հին տարի՛։

(Հին տարին հեռանում է)

Նոր տարի (գալիս է).

Ահա՛ և ես, բարո՛վ, բարո՛վ,
Սիրուն մատաղ երեխե՛ք,
Թէպէտ հիւր եմ ձեզ անծանօթ,
Բայց ինձանից մի՛ վախեք։
Նայեցէ՛ք ինձ, ես էլ ձեզ պէս
Դեռ անփորձ եմ ու փոքրիկ,
Բայց սրտիս մէջ ունիմ պահած
Պէս-պէս չնորք ու բարիք։
Մօտեցէ՛ք ինձ, համբուրեցէ՛ք,
Դուք ինձ համար օտար չէք,
Հէնց որ անունս արտասանեմ,
Իսկոյն ինձ կըճանաչէք։
Բոլորն էլ իմ անունս գիտեն,
Միշտ լսելիս կըխայտան.
Եւ ամեն մարդ լի յոյսերով
Կ'ըսպասէ իմ գալստեան։
Իսկ ամենից շատ սիրում է
Ինձ ազնիւ մարդն ու բարի.
Միայն նրան ես կըբերեմ
Շնորհաւոր նոր տարի՛։
Եկէ՛ք ինձ մօտ, երեխանե՛ր,
Դուք էլ անկեղծ էք բարի.
Ահա յայտնեմ, ուրախացէ՛ք,
Իմ անունն է նոր տարի։

Ա. խ ո ւ մ բ

Բարո՛վ, բարո՛վ, նոր տարի՛,
Մեր սպասած հի՛ւր անգին,
Ուրախութիւնով լցիր
Մեր մատաղ սիրտն ու հոգին։

Բ. խ ո ւ մ բ,

Հազար բարո՛վ, բարեկա՛մ,
Մտերիմ ու պարզ ընկե՛ր,
Քո բարիքից, չնորհքից
Խնդրում ենք մեզ մի՛ զրկեր։

Գ. խ ո ւ մ բ.

Մեր խիղճն անդորր խաղաղ է,
Սիրտը յստակ հայելի,
Հոգին պայծառ և հազար
Ոսկի ցնորքներով լի։

Դ. խ ո ւ մ բ.

Մենք սիրում ենք, հաւատում,
Խորշում վատից ու չարից,
Ե՛կ փարվինք քեզ, նոր տարի,
Լիանանք քո համբոյրից։

ն ո ր տ ա ր ի

Տեսէ՛ք, ծոցումս ամբարել եմ
Բար ու բարիք լաւերին,
Բայց և ունեմ ծածուկ պահած
Պատիժ ու ցաւ չարերին։

Ով ինչ խնդրէ, ես կըբաշխեմ,
Զեմ խառնվիլ արդիւնքին,
Օգուտ, վնաս. ստանալը
Ես թողնում եմ իր խելքին։

Մ ա ճ ր խ ո ւ մ ք.

Դէ՛, նոր տարի գ'ամառատ
Ցույց տո՛ւր քերած մեզ ընծադ։
Տրալալալալայ, տրալալալալ...

Ն ո ր տ ա ր ի.

Ահա ես ձեզ կապանդում եմ
Մրգեղէններ անուշիկ,
Որ միմեանց քաղցրացնէք
Լեզու, բերան քնքուշիկ։

Բ. խ ո ւ մ ք.

Ա՛յ նոր տարի բարերար,
Ի՞նչ պարգև կայ մեզ համար։
Տրալալալալայ տրալալալալայ...

Ն ո ր տ ա ր ի.

Դեռահասակ պատանինե՛ր,
Ձեզ խելք ուսում ու արհեստ,
Զգուում դէպի վեհն ու բարին,
Ինքնուրոյն ժիր կեանքն համեստ։

Գ. խ ո ւ մ ք.

Նոր տարի՛, ի՞նչ ես բերել
Երիտասարդաց վայել։

Նոր տարի.

Հերոսութիւն, յաղթանակ
Սուրը գաղափարի կռւում,
Վսեմ, ազատ սիրոյ վայելք
Այս խեղաթիւր աշխարհում:

Գ. խումբ.

Էյ, նոր տարի՛ մարգասէր,
Ի՞նչ է մեծերի նէր:

Նոր տարի.

Համերաշխութիւն և սփոփանք
Մշտանորոգ կեանքի մէջ,
Փոխան կրած զրկանքների՝
Հանգստութիւն, բարի վերջ:

Խումբ.

Կեցցե՛ս, կեցցե՛ս նոր տարի.
Արդար, խելօք ու բարի,
Մենք կըգրկենք քեզ սիրով
Ու կըգովենք երգերով:
Դէ՛, սար կազմենք ընկերնե՛ր
Այս նոր տարու չորս բոլոր,
Ուրախ, զւարթ թռչկոտենք,
Աւենք իրար շնորհաւոր:

† ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԵՂԵՒՆՈՒ ԶՐՈՅՑԸ

— Ինչ լաւ վառելիք է, ասաց դռնապանը, բակում ընկած մի չորացած եղեւնի տեսնելով և տանելով նրան իր սենեակը։ Բայց որովհետեւ եղեւնին ամբողջապէս չէր մտնում վառարանը, դռնապանը բեբաւ կացինը, որ կտրատի նրա ճիւղերը։ Յանկարծ եղեւնին խօսեց մարդու ձայնով.— Բարի մարդ, դու ինձ մեռցնել ես ուզում, բայց աղաչում եմ քեզ, լսիր իմ պատմութիւնը։ Ես ուզում եմ թեթեւացնել սիրտս մեռնելուց առաջ։

Դռնապանի բերանը ճնաց բաց։ Նա երբէք չէր լսել, որ ծառերը կարող են խօսել մարդու ձայնով։ Եղեւնին նկատելով, որ նա տատանւում է՝ կրկնեց իր խնդիրը։ Վերջապէս դռնապանը համոզւեց, որ այդ հրաչքը կատարւում է իր առաջ և մի կողմ ձգելով կացինը՝ ականջ դրեց եղեւնու պատմութեան։

—„Ես ծնուել եմ քաղաքից ոչ հեռու,— սկսեց եղևնին,—մի մեծ ու խիտ անտառում, որի մեծ մասը կազմում են տերևաւոտ ծառերը, վակ մենք, փշատերևներս, առանձին խմբով ուրիշներից քիչ հեռու էինք կանգնած։

Ձմեռ էր... Մեր անտառում խորին լռութիւն էր տիրում. ամբողջ բնութիւնը քնած էր սպիտակ վերմակի տակ։ Մի օր, առաւօտեանից փաթիլ փաթիլ ձիւն էր գալիս։ Ես չահել էի և ոյժերով լիւմ մէջ ցանկութիւն ծագեց մի կատակ խաղալու, բայց որովհետև հարևաններիցս չատերը քնած էին, ես հաւաքեցի իմ վրայ դիզած ձիւնը և ածեցի նրանց վրայ։ Նրանք ցնցելով զարթնում էին և տրտնջում, և այդ բանը ինձ մեծ զարճութիւն էր պատճառում։ Յանկարծ ականջիս ինչ որ տարօրինակ ձայներ հասան։ Ես իսկոյն թողի կատակները և հետաքրքրութեամբ սկսեցի ականջ դնել։ Շուտով ես պարզ լսեցի չոր ճիւղերի ճայթիւնը. ուրեմն մեզ մօտ են գալիս, մտածեցի ես, բայց ո՛վ և ինչո՞ւ համար, այդ ինձ անհասկանալի էր։ Իրաւ, որ ես չըսխալւեցայ. փոքր ժամանակից յետոյ երևացին մի խումբ մարդիկ, որ գալիս էին ուղղակի մեր կողմը։ Երբ նրանք մօտեցան մեզ, կանգ առան և քննութեան ենթարկեցին մեր խումբը։ Զըգիտեմ թէ ինչի մասին էին վիճում, բայց մի քանի րոպէից յետոյ, նրանք բարձրացրին փայ-

յուն կացինները և սկսեցին այլ ու ձախ հարւածել ջահել եղևնիներին։ Սարսափած նայում էի, թէ ինչպէս ընկերներս հառաչանքով վայր էին ընկնում՝ մէկը միւսի ետևից և երկիւղից դողալով կպայ մօրս, բայց նոյն րոպէին մի անտանելի կսկիծ, ցաւ զգացի և ուշքս կորցրի։ Ինչ եղաւ յետոյ, ես ոչինչ չեմ յիշում, միայն երբ ուշքի եկայ, տեսայ որ դրուխիւնս բոլորովին ուրիշ է։ Ինձ չրջապատել էին և մի քանի տասնեակ եղևնիներ, բայց բոլորն էլ ինձ նման վիրաւորւած էին և չըկարողանալով ոտքի կանգնել՝ թինկ էին տւել մի չինուխեան պատին։ Մեր առաջ մի մեծ հրապարակ էր տարածւում, որի վրայ բաղմաթիւ անցուդարձ անողներ կային։ Առաջ ինձ շատ անդամ պատահել էր լսել քաղաքի նկարագրուխիւնը այն անձինքներից, որոնք ամարանոց էին գալիս մեր կողմերը և ես առանց դժւարուխեան հասկացայ, որ այժմ քաղաքումն եմ։ Զարմանալի բան, ես յաճախ երազում էի մի օր արժանանալ այդ բախտին, բայց այժմ բոլորովին երջանիկ չէի զգում ինձ, որովհետև մի կողմից սաստիկ ցաւը, իսկ միւս կողմից փողոցին անսովոր աղմուկը ինձ շատ չփոթում էին։ Այդ պատճառով ես շատ ուրախացայ, երբ մի մարդ մօտեցաւ ինձ և թևիցս բռնելով դուրս բերեց հրապարակի մէջ տեղը։

— Այս եղևնին ես առնում եմ, ասաց նա, դիմելով մի ուրիշին։

— Շատ բարի, պատասխանեց վերջինս. ես նրա ձայնից իսկոյն ճանաչեցի մեր դահիճներից մէկին և սաստիկ վախեցայ, չըլինի նոր փորձանք գայ գլխիս: Բայց ինչպէս երևում է, այդ մարդը չար դիտաւորութիւն չունէր, որովհետև նա կանչեց մի մշակի, որ ամենայն զգուշութեամբ չալակեց ինձ և մենք ճանապարհ ընկանք: Մի քառորդ ժամից յետոյ մենք կանգ առանք մի տան առաջ: Ինձ առնողը դուռը ծեծեց, որը և իսկոյն բացուեց: Սենեակից դուրս եկաւ մի մատաղահաս տիկին և հրամայեց մշակին, որ ինձ ներս տանի դահլիճը: Այնտեղ արդէն գտնուում էին մի քանի օրիորդներ: Նրանք մօտեցան ինձ, խնամքով կապեցին վէրքերս, ուղղեցին մի քանի ճմլած ճիւղերս և միացեալ ոյժերով ամրացրին ինձ դոյլի մէջ, այնպէս որ ես մի կերպ կարողացայ ոտքի կանգնել: Տեսնելով տիկինների բարութիւնը՝ ես հանգստացայ և մինչև անգամ չըդիմադրեցի, երբ նրանք սկսեցին ինձ բեռնաւորել:

Աստուած իմ, ինչեր չէին կապում ճիւղերիս վրայ. տեսակ տեսակ խազալիքներ, փայլուն դնդակներ, ոսկեզօծ ընկոյզներ և խնձորներ, գոյնզգոյն լապտերներ և շատ ուրիշ պսպղուն առարկաներ, որոնց անուններն անգամ չըգիտեմ: Երբ ճիւղերս այնքան բեռնաւորուեցին, որ թեքուում էին ծանրութիւնից՝ տիկինները բաւական համա-

բեցին ինձ զարդարելը և հեռացան միւս սենեակը: Ես մնացի մենակ, մտատանջութեան մէջ: Այդ կարճ ժամանակամիջոցում ինձ հետ այնքան փոփոխութիւններ եղան, որ չըդիտէի թէ ինչ մտածեմ: Երբ բոլորովին մթնեց, տիկինը ներս մտաւ, ամրացրեց ինձ վրայ բազմաթիւ մոմեր և ուզեց վառել: Մի սառստուռ անցաւ մարմնովս, միթէ նա այրել է ուզում ինձ, մտածեցի ես: Բայց չուտով ես համոզուեցայ, որ երկիւղս անհիմն էր, մոմերը վառուեցին, բայց ինձ ոչ մի վտանգ չէր սպառնում: Երբ ես մի փոքր հանգստացայ՝ սկսեցի դիտել չուրջս և յանկարծ աչքիս մի հրաշալի տեսիլ երևաց: Ամենատեղ, պատուհանի մէջ մի եղևնի էր կանգնած, բայց այնքան դեղեցիկ, այնքան փայլուն, որ ես անկարող եմ նկարագրել նրան: Հիացած նայում էի ես այդ հրաշալի ծառին և չէի ուզում հաւատալ, որ դա միայն իմ պատկերն էր: Բայց կասկածել չէր կարելի, որովհետև դահլիճում ուրիշ եղևնի չըկար: Այդ բանը ինձ այնքան յուզեց, որ ես չընկատեցի թէ ինչպէս մի խումբ երեխայք չըջապատել էին ինձ: Ինչ գեղեցիկ ոճնածառ է... արեգակի պէս փայլում է. ամէն, ինչ լոյս է տարածում իր չուրջը.... Ահա, թէ ինչ տեսակ նկատողութիւններ էի լսում: Սիրտս սաստիկ բաբախում էր: Ես մի չնչին եղևնի էի, իսկ այժմ գրաւել էի ամենքի ուշադրութիւնը:

Այդ րոպէին ես մոռացայ վէրքերս, մոռացայ անցեալս և մտածում էի միայն իմ ներկայ փառքի մասին։ Ամենքը ինձ գովում էին, հիանում էին ինձանով և ես հաւատալով նրանց անկեղծութեանը՝ հպարտանում էի, վերագրելով բոլորը իմ անձնական արժանաւորութիւններին։

Իրանց ուզածին չափ խաղալով և զարճանալով՝ երեխաքը ցրուեցին, կողոպտելով իմ ամենալաւ զարդերը։ Ես միայն դարձեալ մենակ, բայց այս անգամ օրօրում էի ինձ քաղցր երազներով։ Աւա՜ղ, ես չարաչար սխալւում էի։ Միւս օրը նոյն տիկինները, որոնք այնպիսի խնամքով զարդարում էին ինձ՝ հանեցին վերջին զարդերս և մերկ տարան բակը։ Այստեղ երևի մի թիւրիմացութիւն կայ, մտածեցի ես առանց կասկածելու։ Այդ ժամանակ դուռն առաջով անցնում էին մի քանի փողոցային տղաներ։ Նկատելով ինձ, նրանցից մէկը վազեց իմ կողմը և ոտքով հրեց ինձ, իսկ միւսները ծիծաղից թուլանում էին։

—Կամա՛ց, կամա՛ց... տօնածառ է, չե՞ս տեսնո՛ւմ... Ճիւղերը կըկոտրես... Էլ ինչի՞ պէտք կըգայ։ Հա՛... հա՛... հա՛...

Այդ արդէն չափից դուրս էր։ Վշտից և ամօթից ես ընկայ գետին և սկսեցի հեկեկալ։ Երէկ չէ՛ր որ ինձ այնքան պատւում էին, չըգիտէին ինչպէս չոյել և խնամել, իսկ այսօր ինչ յանցանք եմ

գործել, որ ինձ ծաղրում են: Ես անփորձ էի և յափշտակւել էի կեղծ փառքով: Ինձ համար շատ դառն էր այժմ համոզւիլ, որ պատւում էին ոչ թէ ինձ, այլ իմ փայլուն հագուստները: Ինչո՞ւ համար ինձ հանեցին իմ մայրենի անտառից, ուր ես կարող էի տասնեակ տարիներ ապրել, և քաշեցին այստեղ, ենթարկելով ինձ հազար ու մի չարչարանքների: Քանի որ զարճուրթիւն էին սպասում ինձանից՝ նրանք ինձ պատւում էին, իսկ յետոյ ղէն չպրտեցին ինչպէս մի անպէտք բան:

Մի ամբողջ ամիս ընկած էի բակի մէջ և չըկար մէկը, որ ինձ խոճար...

—Տեսնո՞ւմ ես, վշտից ու ցաւից ինչպէս չորացել եմ: Կեանքը հրապուրիչ չէ այժմ ինձ համար. ես ուրախութեամբ կըմեռնեմ, բայց, բարի մարդ, եթէ երբ և իցէ անցնես մեր անտառով՝ տար նրան իմ վերջին ողջոյնը և ասա՛, որ մեռնում եմ, կարօտ նրա տեսութեան“:

Լռեց եղևնին... լուռ էր և դռնապանը: Այդ պատմութիւնը խոր տպաւորութիւն թողեց նրա վրայ: Նա բարի մարդ էր և անկեղծ ցաւակցեց թշւառ եղևնուն: Վառարանի հոգսը մի կողմ դնելով՝ նա սկսեց փայփայել թշւառին, բայց բոլոր ջանքերն ի զուր էին: Ուժասպառ եղևնին էլ չէր կարող նորից ծաղկել և նա մեռաւ...

Բարի դռնապանը կամենալով յարգել նրա

Hermann Kaulbach

չիշատակը՝ բառ առ բառ արձանագրեց եղևնու անկեղծ պատմութիւնը։ Նա յուսով էր, որ շատերը լսելով նրա գլխի անցքը, աւելի բարեխղճաբար կվերաբերուին միւս եղևնիներին։

Մ. ԱՐՈՒԽ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՄԱՆՈՒԿԸ

(Փոխադրութիւն)

1871 թուականի ձմեռն էր։ Ֆրանսիացիք պատերազմում էին գերմանացոց հետ։ Ամբողջ Ֆրանսիական երկիրը ծածկուել էր զինուորների անթիւ դիակներով։

Գերմանացի զինուորներից բաղկացած մի վաշտ մօտենում էր մի փոքրիկ, համարեա ամայի Ֆրանսիական գիւղի, որի բնակիչները մասամբ սպանուած էին եւ մասամբ գնացել էին պատերազմելու բնամոլ հետ։ Խրճիթներից մինում մի պառաւ կին իր թոռան հետ նստած՝ տաքանում էր կրակի մօտ։ Մի քիչ ժամանակ առաջ այդ տեղով անցել էին Ֆրանսիացի զինուորները, եւ պառաւն ու իր թոռը, փոքրիկ Յովսէփը, տեսան, թէ նրանք դէպի որ կողմ գնացին։ Նրանք դիտել էին, որ գերմանացիք իրանցից մօտ են եւ վախենում էին, թէ մի գուցէ կըգան եւ կըգտնեն Ֆրանսիացոց։ Այդ մտքի վրայ էին, երբ յանկարծ դուռը բախեցին, եւ խրճիթը ներս խուժեցին գերմանացիք։ Նրանց առաջին խօսքը եղաւ Ֆրանսիացոց մասին։

—Էյ, պառաւ, գոռաց նրանց գլխաւորը, դու չըգիտե՞ս Ֆրանսիացիք ուր գնացին։

Բայց պառաւը գլուխը բարձ գցած ոչինչ չէր պատասխանում։ Սպան կրկնեց իր հարցը, սակայն պառաւը դարձեալ լուռ էր։

—Տեսնում էի, որ նա խուլ է, եւ ինչ էի ժամանակ կորցնում, ասաց գերմանացիներից մէկը, հարցէի նրա այս փոխրիկին, նա, ինչպէս երեւում է, ամեն ինչ գիտէ։ Եւ փոխրիկ Յովսէփին շրջապատեցին, սեղմելով նրան ցոյց տալ ճանապարհը տեղը։

—Մենք ձեզ փող կըտանք, ասում էին նրանք։

Երկար տատանւում էր Յովսէփը եւ չըգիտէր ինչ վճռել։ Մեծ մայրը նայում էր բարկացած նրա վրայ, եւ Յովսէփը հասկանում էր, թէ նա ինչ է ուզում ասել։ Վերջապէս նա առաջ անցաւ եւ ասաց համառձակ կերպով.

—Գնանք, ես ձեզ ցոյց կըտամ։

Եւ մի րոպէից յետոյ ձիու վրայ նստած՝ նա արդէն սլանում էր դաշտի միջով գերմանացոց հետ։ Իսկ պառաւը մնաց մենակ տխրութեան մէջ։ Նա գիտէր, որ Յովսէփը իր հայրենակիցներին չի մատնիլ։ Բայց նա վախենում էր, թէ մի գուցէ գերմանացիք նրան սպանեն, երբ իմանան, թէ Յովսէփը նրանց խաբել է։

Իսկ գերմանացիք յոգնած, վաստակած, անտառի միջով երկար ճանր տեղը մաղ գալուց յետոյ միայն հասկացան, որ տղան նրանց խաբել է, եւ ուզում էին տեղն ու տեղը սպանել, բայց յետոյ խղճալով, կապեցին նրան թոկով ծառից եւ իրանք հեռացան։

Յովսէփը մնաց մենակ, անօգնական եւ չըգիտէր թէ ինչպէս ազատել կապանքներից։ Երկար նա մտածեց եւ ոչ մի հնար չըգտնելով, սկսեց դառն կերպով լաց լինել։ Նա մտաբերեց իր պառաւ տատին, որ հիմա գուցէ մաղ է գալիս իր եետից։ Նա մտածում էր, որ գիշերը շուտով վրայ կըհասնի, գայլերն դուրս կըգան իրանց որջերից։ Եւ Յովսէփը սկսեց ամբողջ մարմնով դողալ։ Երկար նա մնաց այդ դրութեան մէջ. շատ երկար նա տանջւեց։ Բայց հայրենասէր մանուկը, բազմաթիւ նայրենակիցների ազատիչը, ինքը եւս վերջ ի վերջոյ ազատւեց կապանքներից, շնորհիւ մի գերմանացի զինուորի, որ խղճալով անվեհեր մանկանը, վերադարձաւ եւ բաց թողեց նրա կապանքները։

ԱՐՍԷՆ ԱՄՒՐԵԱՆ

ԾԱՂՐԱԾԻՒ ԱՒԱՍՊԵԼՆԵՐԸ

(ԿԱՂԱՆԴԻ ՆՈՐԱՎԷՊ)

Որ նախարարների հետ միասին արքան քէֆ անելով էր դիմաւորում Նոր Տարուն: Նա երիտասարդ էր, դեղեցիկ, բախտը ժպտում էր նրա երեսին մինչև այդ ժամանակ: Նա հաւատացած էր, որ այդ բախտը նրան երբէք չի դաւաճանիլ, և յանդուգն կերպով նա երջանկութիւն էր պահանջում իր ճակատագրից ապագայում:

Նրա հին՝ հօր խորհրդատուները աշխատում էին համոզել, հասկացնել նրան, որ նա լրջօրէն մտածի առաջիկայ տարւայ մասին, սակայն գինուց և երաժշտութիւնից յոգնած՝ խորհրդատուների փոխարէն նա իր մօտ կանչեց իր ծաղրածուին:

—Պատմիր մեզ համար զւարճալի հեքիաթներ, ասաց արքան:

Ծաղրածուն մի թեթև հայեացք ձգեց իր շուրջը և, գլխտով ցնցելով իր գլուխը՝ սկսեց.

«Զոտլանդիայում կար մի հին ամրոց: Նա ամուր և անմատչելի էր: Զոտլանդացիք զուր էին կողոպտում շրջակայ երկիրը, զուր նրանց «Սիւ» մականուանեալ Թուգլաս զօրավարը ձեռք չէր վերցնում մօտակայ անտառից.—Ըօքսբուրգ ամրոցը անմատչելի էր, ինչպէս ժայռը ծովում: Թուգլասի անունը սարսափ էր ազդում ամբողջ Անգլիայում, սակայն ամրոցի բնակիչները միանգամայն հանդիստ էին:

«Մի անգամ ամրոցաբնակ կանանցից մէկը, զուրս եկաւ

աշտարակի վրայ՝ արևի մուտքը դիտելու և հիանալու: Նստելով ժայռի վրայ՝ նա օրօրում էր իր երեխային և երգ ասում: Նրա առաջ տարածւած էր դաշտը, հեռաստանում նիրհում էր անտառը, ուր պէտք է որ Պուզլասի զօրքերը թաքնւած լինէին: Եւ դետը, անցնելով ծառերի միջով, տեղ-տեղ փայլում էր արևի ոսկի ճառագայթներից:

«Սարի տակ, հեռւում, մի ինչ որ շարժում կար»:

«Կինը ձայն տւեց պահապան ղինւորին,—թէ, արդեօք, թշնամին է այն, որ շարժւում է այնտեղ՝ ղիմացը:

«—Դրանք ագարակատէրերի ոչխարներն են,—պատասխանեց ղինւորը, և հանգիստ շարունակեց իր քայլւածքը հրապարակի վրայ:

«Արևը մայր մտաւ, սկսեց մթնել: Կինը օրօրում էր երեխային և երգում.

Oror եմ ասում, մանուկ իմ անգին,
Քնիր հանդարտիկ, իմ ազիզ բալաս.
Գիշերը դաշտում տնփում է համին,—
Եւ հայամարտիկ զօրավար Պուզլաս
Քեզ ու ինձ համար, օ՛, այստեղ չի՛ գալ,
Պատի համակից նա մեզ ձեռ չի տալ:

«—Իսկ դու, գեղեցկուհի, հաստատ հաւատացած ես այդ բանում.—լսւեց հէնց նրա ականջի տակ մի ձայն և ծանր ձեռքը՝ երկաթէ ձեռնոցով իջաւ նրա ուսի վրայ:

«Կինը յետ նայեց.—տեսաւ սևազրահ Պուզլասին իր առաջը կանգնած»:

—Դէ, այդ հեքիաթ է.—ասաց արքան.—տխուր բաներ են հին խորհրդատուների խրատները:—Ջարճանա՛նք, իմ բարեկամնե՛ր.—բախտը չի համարձակւել Պուզլասին մեզ մօտ ուղարկել:

—

Տարին անցաւ: Արքան, որ այնքան ջերմաջերմ հաւատացած էր իր բախտի, իր ճակատագրի անդաւաճանութեան վերաբերմամբ,—Նոր-Տարուն այժմ դիմաւորում էր... գերութեան մէջ:

Նա ապրում էր Նորմանդիայի մի խուլ ամրոցում:

Մոռացութեան տւին նրան իր բարեկամները, նախարարները դաւաճանեցին, և նա ծերացաւ վշտի և անբախտութեան վիճակի մէջ։—Նա վհատութիւնից հոգեմաշ էր եղել։

Նստած է նա ծովի մօտ՝ ամրոցում, և լսում է, թէ ինչպէս ծովը աղմկում է իր ալիքներով, ծփում, և ձկնկուլները ձայներ են հանում նրա ափին։

Նրա մօտ մնաց միայն իր հաւատարիմ ծաղրածուն։

Երբ սկսեց խնդրել, որ նա նորից առասպելները պատմէ։

Ծաղրածուն մի րոպէ մտածեց և ապա սկսեց պատմել։

«Պանիայում կար Հառայլդ անունով մի քաջ և ուժեղ ասպետ։ Նա ինքը մեն-մենակ կարող էր դիմադրել մի ամբողջ խումբ թշնամիների, կամ բարձրանալ և մտնել մի անմատչելի ամրոց։ Նրա մասին պատմում էին, որ Պանիայում շատ սակաւ են պատահում այդպիսի քաջեր։ Մի պառաւ գնչուհի Հառայլդին գուշակեց, որ նրա բախտը—դիմակի տակն է։ Եւ այնուհետև, ուր էլ որ լինէր, իր բախտի մասին արտայայտած միտքը ամենուրեք հալածում էր նրան։ Նա պատերազմի է եղել գնացած՝ Սուրբ-Երկիրը՝ անհաւատների դէմ կռւելու։ Պատահում է, որ երբ պառկած է լինում իր վրանի մէջ և դիտելիս է եղել հեռուն՝ անապատը,—յանկարծ, ջրհորի վրայ, արմաւենիների տակ՝ մի կին սկսել է փայլել, ձեռքին մի սափոր, իսկ դէմքը՝ սև քողով ծածկած։ Տեղից ցատկում է Հառայլդը, թւում է նրան, որ այդ՝ իր բախտն է, և վազում է դէպի ջրհորը։—Բայց ոչ ոք չըկայ. իր շուրջը ամեն ինչ հանդարտ է, արմաւենիները խաղաղ նիրհում են ջրհորի վրայ իսկ անապատում ամեն ինչ, թէ օդը, թէ երկինքը և թէ գետինը.—բոլորն էլ մռայլ են, անտանելի և ծածկւած տխրութեան քողով։

«Հառայլդը գնում է իր հայրենի տեղերով։ Ձին յամրընթաց ոտք է կոխում անտառային ճանապարհի վրայ։ Տերևախիտ կաղնիները խոնարհեցնում են իրանց ճիւղերը... Յանկարծ՝ հեռաստանում անցնում է մի ջահիլ կին, ցնցոտիներ հագած, կարծես աղքատ լինէր, և Հառայլդին տեսնելուն պէս՝ թաքցնում է իր դէմքը։ Նա թաքնւեց, և միայն տերևախիտ

Andriolli.

ծառերի խոլամանկ ճիւղերն էին, որ փսփսում էին միմեանց հետ խորհրդաւոր շշուկներով:

«Հառաչդը մի անգամ գնացել էր պարահանդէս:

«Երաժշտութիւնը դղրդում էր, իսկ աստեղները՝ թաւշեայ և մետաքսեայ հագուստներով պճնուած՝ պարում էին դիմակաւոր կանանց հետ: Մանկլաւիկները նրանց զանազան խմիչքներ էին հրամցնում:

«Հառաչդը տեսնում է մի գեղեցկուհի: Նրա ճկուն մէջքը սեղմուած է կապտագոյն հագուստով, կրծքի և ձեռքերի վրայ շողշողում են թանգագին քարեր, իսկ դէմքին՝ սև դիմակ ունի ծածկած:

«Հառաչդը մօտենում է նրան. կինը ուրախութեամբ համաձայնում է նրա հետ պարել, բայց աստղը զգում է, թէ ինչպէս նրա ձեռքերը այրում են իրան, և թէ ինչպէս արիւնը իր երակներում հետզհետէ բոցավառւում է, որպէս մի կրակ:

«Դա նա է, վճռում է իր մտքում հառաչդը:

«Նա նրան առաջնորդում է մի առանձին սենեակ:

«—Ես գիտեմ,—ասում է նա,—որ դու իմ բախտն ես. Հանիր դիմակդ:

«Երկար խնդրում էր հառաչդը նրանից, սակայն ի զուր... Այն ժամանակ՝ ուժով պոկում է նա դիմակը նրա դէմքից... Այդ րոպէին ճրագը հանգչում է: Լուսնի դժգոյն լոյսը հազիւ էր սենեակը լուսաւորում»:

Ծաղրածուն կանգ առաւ:

—Իսկ ինչ կար դիմակի տակը,—հարցրեց արքան:

—Ոչինչ. հէնց որ նրա երեսից դիմակը պոկեց՝ չքնաղ գեղեցկուհու շրթերը գետին թափուեցին, և երևաց, որ նրա մէջ դատարկութիւն էր տիրում, միայն դատարկութիւն—և ուրիշ ոչինչ:

—Այո՛, այդպէս է աշխարհային երջանկութիւնը, համաձայնեց արքան և ազատ շունչ քաշեց:

Թարգմ. Ֆ. ԲԱՔՈՒՐԵԱՆՑ

ԵՐԳԻՉՆ

Համեստ երգիչ, քո սրտումն է
Այն անմեկին երկինքը.
Ըսկիզբ, վախճան եւ կեանք եւ մահ,
Ներանց անյայտ գաղտնիքը:
Ասա դու ինձ, այն կուիւը,
Որ կոչւում է գոյութեան,
Պիտի խեղդէ՞ իր հոսանքում
Ամեն իղէալ, ամեն ըան:
Ասա՛ դու ինձ վերջին խօսքըդ
Այդ վիշապը պիտ կո՞ւլ տայ
Այն սուրբ խաչը սիրոյ, գութի,
Որ բարձրացաւ Գողգոթայ:
Գողգոթայի Նահատակը
Ի՞նչ աւանդեց աշխարհին.
Հաւատո, Յո՞յս, Սէ՞ր թէ լոկ ցընորք
Նա պահ տուեց տկարին:
Սակայն, Երգիչ, հաւատ ունիմ,
Հաւատ զօրեղ այն խաչին,
Որ այլանդակ, բրոնի ոյժերը
Սիրոյ առաջ պիտ կորչին:

ԱԹ. ԽՆԿՈՅԵԱՆՑ



Կ Ա Յ Ծ — Ո Գ Ի

(Ծննդեան հեքիաթ)

Տասն և մէկ տարեկան Արծուիկը հանդարտ ու մտախոհ կերպով նստել էր փոքրիկ պատուհանի առաջ:

Պարզ և աղքատիկ, բայց վերին աստիճանի մաքուր էր այն սենեակի սարք ու կարգը, ուր գտնում ենք մեր հէքիաթի փոքրիկ հերոսուհուն:

Վարդադոյն չիթից կարած վարագոյրը բաժանում էր սենեակը երկու մասի. մէկ մասում կային երկու մահճակալ, ծածկուած կոշտ, բայց մաքուր ճերմակեղէնով, և մի պահարան՝ մէջը ամաններ. միւս մասում, շարուած էին վեց հասարակ աթոռներ, ճաշի սեղան և մի ուրիշ պահարան՝ մէջը գրքեր: Պատուհանների վրայ կային հասարակ, բայց հոգատարութեամբ խնամուած ծաղիկներ և կախուած էին մաքուր վարագոյրներ. սեղանը ծածկուած էր մաքուր սփռոցով, իսկ վառարանում ճարճատում էին բոցավառուած փայտերը, տարածելով այն հաճելի, փայլփլող կլսալոյսը, որ լաւ յայտնի է ամեն մէկին:

Գունատ ու նիհար, սևամազ աղջիկը նստած էր լռիկ և ուշադրութեամբ դիտում էր զանազան տեսակի այն զարմանալի նկարները, որ սառնամանիքը դուրս էր բերել պատուհանի ապակիների վրայ:

Հանդարտ և սաստիկ ցուրտ երեկոյ էր, Ծննդեան ճրագալոյծի երեկոն. բայց Արծուիկը ոչ ոքից ոչ մի ընծայ չէր սպա-

սում և ոչ էլ տօնածառ։ Նոյն իսկ մոմն էլ չէր վառում, որովհետև գիտէր, որ իրանց տանը միայն մի հատ մոմ կայ, և կքսամուխթ, միայն վառարանի բոցով լուսաւորուղ սենեակում նա համբերութեամբ սպասում էր իր բարի մայրիկի վերադարձին, որ գիշեր-ցերեկ աշխատում էր՝ առանց շունչ քաշելու ու գնացել էր վաղւան ճաշի համար բոլոր հարկաւոր բաներն առնելու։

Մի երիտասարդ, տաղանդաւոր և անճնւէր, բայց չքաւոր քահանայ— ուսուցչի աղջիկ լինելով՝ Արծւիկը վաղ մանկութիւնից ճաշակել էր աղքատութեան և կարօտութեան բոլոր դառնութիւնները։ Խեղճ աղջիկը վաղ մանկութիւնից զրկւել էր հօրից։ Թէև երիտասարդ քահանան իր անկեղծ ոգևորւած և կենդանի քարոզներով բարի ուրիշ գործերով կարճ միջոցում իր հայրենի գաւառում ձեռք բերաւ մեծ փառք ու հռչակ, բայց ծայրահեղ աղքատութեան մէջ թողեց իր ամուսնուն ու մանկանը։ Արծւիկի մայրը չդիւսահատեց. նա սկսեց աշխատել, դասեր տալ, կար անել, արտագրութեամբ պարապւել, որ կարողանայ կերակրել իր միակ աղջկանը, իր սիրելի, նազելի Արծւիկին։

Մեր Արծւիկը դէմքի և բնաւորութեամբ նման էր իրվաղամեր հօրը. նա վաղ մանկութիւնից հակումն ունէր դէպի նկարչութիւնը, ինչպէս և նրա տաղանդաւոր հայրը։ Հանդարտ, համեստ և մտախոհ Արծւիկը չէր մասնակցում մանկական խաղերին և շատ անգամ ամբողջ օրերով նստում էր մատիտը ձեռին, կամ նկարում էր, կամ կարդում։ Նրա մայրը շատ անգամ ամբողջ օրով հեռանում էր տանից և նրան մենակ էր թողնում. Արծւիկն էլ սովորել էր մենակութեան և չէր նեղւում։ Երեխայի գլխում ստեղծւում էին հրաշալի պատկերներ, որ և Արծւիկը նկարում էր, թղթի վրայ, թէև անարւեստ կերպով։ Փոքրիկ աղջիկը երբէք չէր վհատում և այդ պարզ ու ցուրտ նախատօնիքին իսկ տրտում չէր։ Նա ձանձրացաւ սառնամանիքից գոյացած նկարները դիտելուց և վերցնելով աթոռը, ճակատից յետ գցելով իր մետաքսեայ գանգուրները ու նիհար ձեռքերը ծալելով ծնկերի վրայ, նստեց վառարանի մօտ և մտածութեան մէջ ընկաւ։ Նա մտածում էր, թէ որքան լաւ կլինէր, եթէ ինքն էլ տօնածառ ունենար՝

զարդարուած զանազան մոմերով, գոյնզգոյն լապտերներով, ոսկեզօծ ընկոյզներով, այնպիսի մի մեծ տօնածառ, որ մի անգամ նա տեսել էր իր մայրիկի հետ մի մեծ տան պատուհաններին տակով անցնելու ժամանակ: Եւ ինչի եղևնիկներն առնում ու զարդարում են հէնց ծննդեան տօներին, ինչի մարդիկ եղևնիկն են ընտրել և ոչ մի ուրիշ ծառ, մտածում էր խելօք աղջիկը, նայելով կրակի վրայ. կարծես թէ նրանից էր սպասում իր հարցերի պատասխանը:

Եւ յանկարծ վառարանից ճայթիւնով դուրս թռաւ փոքրիկ, լուսափթիթ, աստղիկի պէս պայծառ մի կայծ, որ սկսեց պտոյտ տալ սենեակում. և Արծուիկը տեսնում է, որ դա կայծ չէ, այլ մի հրաշագեղ փոքրիկ աղջիկ, իրանից էլ փոքր. նրա թեթեւ, օդեղէն, սպիտակ շորերը զարդարուած էին միլիօնաւոր շողշողուն կայծիկներով, մազերը երկար ու սև էին, իսկ գլխին ունէր կայծեղէն շողշողուն թագ: Պայծառ փայլում էին նրա խոշոր ու սև աչքերը և քաղցր ու սիրալիր ժպիտը խաղում էր նրա վարդագոյն շրթունքների վրայ, և կայծիկներից բաղկացած նրա փոքրիկ զգեստը լուսաւորում էր ամբողջ սենեակը:

Հէնց որ կայծը դուրս թռաւ սենեակը խոկոյն լուսաւորուեց, և Արծուիկը տեսնելով Կայծ-Ոգու զարմանք պէմքը, ինքն էլ ուրախացաւ. իր մտախոհ, դիտող սև աչքերով նայելով նրա վրայ, Արծուիկը պարզ և համարձակ հարցրեց. Ո՞վ ես դու և ինչի ես եկել այստեղ:

—Ես Կայծ—Ոգին եմ,—զարմանք ձայնով պատասխանեց կախարդուհին. եկել եմ զրոյց անելու քեզ հետ, որովհետև դու խելօք և բարի աղջիկ ես, իսկ ես շատ եմ սիրում խելօք և բարի երեխաներին: Ես դուշակում եմ նրանց մտքերը և աշխատում եմ նրանց հարցերին պատասխաններ տալ, որովհետև նրանց մտածմունքները պարզ և խելացի են: Արծուիկ, դու ցանկանում էիր իմանալ, թէ ինչի մարդիկ եղևնիկն են ընտրել ծննդեան տօնածառի համար և ինչի են նրան զարդարում ծննդեան տօներին. ահա ես եկել եմ պատմելու դրա մասին: Շատ հին ժամանակներումն էլ կային գիտնականներ, հերոսներ և ուրիշ տեսակի մեծ մարդիկ, ինչպէս և այժմ. բոլոր այդ մարդիկ շատ թշուառ կեանք էին վարում, որովհետև նոյն իսկ

գիտնականները չէին հասկանում այն պարզ ճշմարտութիւնը, որ մարդիկ,—առանց ազգի խտրութեան, հարուստ թէ աղքատ,—եղբայրներ են. նրանք դժբախտ էին, որովհետև բոլորը ատում, հալածում, ղրկում, սպանում էին միմեանց, ինչպէս ներկայումս ձեր բազմաչարչար արիւնակիցներին կոտորում են բարբարոս քրդերը, տաճիկները և ուրիշ այնպիսի ցեղեր, որոնք մինչև այժմ չեն լուսաւորուած քրիստոնէական լոյսով: Մռայլ էր աշխարհը թափուած արիւն-արցունքից, ինչպէս այժմ ծւատուած, արիւնաքամ եղած Հայաստան աշխարհը, բայց ահա մի խուլ, յետ ընկած քաղաքում, յարդի վրայ ծնուեց մի Մանուկ և աշխարհը վերանորոգուեց: Այդ Մանուկը հին խաւար աշխարհի մէջ լոյսի ճառագայթ մտցրեց: Նա ջերմութիւն շընչեց երկրի վրայ, մարդկանց սովորացրեց սիրել իրանց մերձաւորներին և օգնել նրանց, ցոյց տուեց մարդկանց, որ փառքից, հարստութիւնից էլ բարձր երջանկութիւն կայ, այն է՝ մարդեղբօրը օգնելու, նրա համար ապրելու և մեռնելու երջանկութիւնը:

Իմ գառնուկ, ձմեռ ժամանակ յարդի վրայ ծնուած այդ աստուածային Մանկան քարոզները նորոգեցին զառամեալ, կործանուղ աշխարհը. նրա քարոզները մարդկութեան համար նոյնն էին, ինչ որ գարունը բնութեան համար. նրա քարոզած մտքերը, գաղափարները յաւիտեան պիտի անմահ մնան, և այդ պատճառով մարդիկ ծննդեան տօնածառի համար ընտրել են մշտադալար եղևնիկը, որ զարդարում են Քրիստոսի ծննդեան տօնի օրը: Սիրելի Արծուիկ, ծննդեան տօնը—մանկական տօն է, որովհետև Փրկիչը շատ էր սիրում երեխաներին. Նա գիտէր, որ նրանց սրտերը աւելի մաքուր, փափուկ և զգայուն են՝ քան մեծերի սրտերը, և այդ պատճառով նա շատ անգամ էր զրոյցներ անում երեխաների հետ: Ահա ինչու մանուկների համար տօնածառ են սարքում ծննդեան տօներին և ահա ինչու ամեն մի մանուկ, նայելով մշտադալար եղևնիկի վրայ, որ յիշեցնում է Քրիստոսի անմահ վարդապետութիւնը, չըպիտի մոռանայ, որ շատ որբ ու անտէր, հայրենազուրկ երեխաներ կան, որոնց հայրերի տուն ու տեղը քարուքանդ են արել հայ—քրիստոնեաների ոսոխ՝ արիւնարբու և գիշատիչ քրդերն ու

տաճիկները և ծնողներին կոտորել, որոնք ուտելու կամ հագնելու ոչինչ չունեն, ոչ էլ տաք անկողին, որոնք գիշերւայ պատսպարան չունեն և թողած իրանց աւերւած հայրենիքը թափառում են օտար երկրներում, օտար, անկարեկից ազգերի մէջ...

Արծւիկը խիստ մտածութեան մէջ ընկաւ, լսելով Կայծ— Ոգու վերջին խօսքերը և շւարած նայեց նրա վրայ։ — Դու զարմանում ես, Արծւիկ, չէս հաւատում, որ այդպիսի թշւառ երեխաներ կան։ Ես գիտեմ, որ դու քո բաժին կաթնահունցը, կաթը, ընծաները բաժանում ես դրացի երեխաների հետ. այդ պատճառով էլ եկել եմ քո մօտ։ Գիտես դու, Արծւիկ, որ ես ապրում եմ քո խելօք գլխի և բարի սրտի մէջ։ Ամեն մի երեխայի ծնւելու ժամանակ աստղերից մէկը վայր է ձգում իր ճառագայթը, որ կայծ է դառնում և այդ կայծը ընկնում է մանկան հոգու մէջ։ Մարդիկ զանազան անուններով են մկրտել մեզ՝ կայծերիս. նրանք մեզ *խիղճ* կամ *միտք* են անւանում. բայց բանը անւան մէջ չէ. Արծւիկ։ Իմացիր, որ շատերը բռնի կերպով հանգցնում են մեզ իրանց մէջ, արտաքսում են մեզ, որովհետև մենք չենք կարող վատ մարդկանց մէջ ապրել, չենք կարող վատ գործերը տեսնել, որովհետև մենք հանգստութիւն չենք տալիս այն մարդուն, որ թէկուզ մի անգամ չար գործ լինի բռնած, որովհետև այն մարդիկ, որոնց մէջ մենք վառւում ենք, չեն կարող անտարբեր վերաբերւել դէպի ուրիշի վիշտը, որովհետև նրանք լալիս են լացողի հետ, որովհետև նրանք իրանց ունեցածը բաժանում են չունեւորների հետ, որովհետև միայն մենք-կայծիկներս ենք մարդուն տարբերում անասունից։

Ոչքան ուրախանում են այդպիսի մարդիկ ամեն մի բարի միտք իրագործելիս, ամեն մի բարի գործից յետոյ! Մենք նոյնպէս ուրախանում ենք, բայց այն մարդիկ, որոնց գլուխներում ապրում ենք, երկու անգամ աւելի են ուրախանում։ Նեղ սենեակը նրանց պալատ է թւում, աղքատիկ շորը՝ տօն օրւայ պաճուճանք, չոր ու ցամաք պանիր-հացը՝ փառահեղ ճաշ. բայց բաւական է լուրջ բաների մասին դատողութիւններ տալ, Արծւիկ! Նայիր այս կողմը, ահա մայրիկդ գալիս է մի ինչ որ

պարոնի հետ և եղևնիկ է բերում,—ծիծաղեց Կայծ—Ոգին ու ծափահարեց:

Արծւիկը վառեց մոմը, շտապով վազեց դէպի մայրիկը և նրա ձեռքից առաւ կապոցը, իսկ մայրը սիրով համբուրեց աղջկան և մօտեցնելով նրան բարձրահասակ ու վայելչակազմ, խոշոր, բարի ու կապոյտ աչքերով նրան անծանօթ երիտասարդին, հանդարտութեամբ ասաց. «Արծւիկ, այս պարոնը ուսուցիչ Լիւոն Պուբինեանն է, քո հայրիկի ընկերը»:

Երիտասարդ ուսուցիչը պինդ համբուրեց Արծւիկի սև գանդուրներով ծածկուած դլխիկը և քնքշութեամբ նայեց նրա սև աչքերին, որոնք այնքան կենդանի կերպով յիշեցնում էին նրա հանգուցեալ բարեկամին: Զգուշութեամբ հանեց նա իր մուշտակի տակից փոքրիկ, բայց դեղեցիկ ու բազմաճիւղ եղևնիկը: Արծւիկի մայրիկն էլ բացաւ կապոցը և սկսեց հանել մեղրահացեր, շաքարեղէն, ընկոյզներ, խնձորներ, գոյնզգոյն լապտերներ ու մոմեր, իսկ երիտասարդ ուսուցիչը սկսեց զարդարել եղևնիկը, և քառորդ ժամից յետոյ տօնածառի մոմերը վառեցին:

Արծւիկը ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնեց երիտասարդ ուսուցչին և նրանից ու մայրիկից թոյլտուութիւն խնդրեց հրաւիրել իր բարեկամներին (երևի Կայծ—Ոգին էր ներշնչել նրան այդ միտքը) և շուտով սենեակը լցւեց աղքատիկ հագնւած երեխաներով—ու տղաներով, որոնց մէջ գաղթականների երեխաներ էլ կային: Արծւիկը նրանց բոլորին ընծաներ բաժանեց, ոչ մէկին բաց չթողեց. նա հիւրասիրեց և երիտասարդ ուսուցչին ու իր մայրիկին. իսկ իր համար շատ փոքրիկ բաժին թողեց. բայց բոլորից շատ ինքն էր ուրախանում, որովհետև նրա հետ ուրախանում ու պարում էր Կայծ—Ոգին: Նրա փոքրիկ, պարզ տօնածառը թւում էր այնքան մեծ, շքեղ զարդարւած ու դեղեցիկ, որքան այն մեծ և ճոխ տօնածառը, որ նա տեսել էր:

Երիտասարդ ուսուցիչն ու Արծւիկի յոգնած և վշտից ու անչափ աշխատելուց շուտ ծերացած մայրը հանդարտ զրոյց էին անում, թէյ խմելով, և ուրախութիւնը մեղմ փայլում էր երկուսի դէմքերին, չընայած սենեակի նեղութեան և պարզ, անպաճոյճ ընթրիքին: Նրանց թւում էր թէ հեշտաեռի խրժ-

ժողը զմայլեցուցիչ երաժշտութիւն է, աղքատիկ սենեակը՝ պալատ, համեստ ընթրիքը՝ խնջոյք, ուրովհետև նրանց հոգու մէջ նոյնպէս ապրում և փայլում էր կայծ — Ոգին:

Սակայն ամեն բան էլ վերջ ունի. վերջացաւ և ծննդեան ճրագալոյցը: Բայց Արծուիկը չմոռացաւ կայծ – Ոգուն և միւս օրը նրա նկարների մէջ երևաց և կայծ - Ոգու շնորհալի նկարած պատկերը: Խոր մտածութեան մէջ ընկաւ Արծուիկի մայրիկը, նայելով նրա նկարն վրայ: Նա պինդ համբուրեց իր աղջկայ ճակատը. նրա համար էլ շատ թանկ էր կայծ—Ոգին, որ պայծառ փայլում և վառւում էր նրա հոգու մէջ:

Փոխադր. Ջ. Տ.—Ֆ.



ՓՈՓՐԻԿ ՀԻԱՆԴԱՊԱՀԸ

Արշակի ծնողները վաղուց արդէն մեռել էին և որբացած մանուկը ապրում էր իր հօրեղբօր մօտ, որ հացթուխ էր և հազիւ էր կարողանում ծայրը ծայրին հասցնել, իր բազմանդամ ընտանիքին օրական ապրուստ հայհայթել։ Արդէն երկու տարի էր, որ Արշակը դպրոց էր գնում և իր ընդունակութիւնների ու ջանասիրութեան շնորհիւ միշտ ուսուցիչների գովասանքին էր արժանանում և դպրոցի ամենալաւ աշակերտներից մէկը համարւում։ Բայց դժբախտաբար նրա հօրեղբայրը չքաւորութեան պատճառով չէր կարողանում նրա համար կանոնաւոր հաղուստ գնել և դասագրքերի ու մի-ւս ուսումնական պիտոյքների արժէքը վճարել։ Այդ պատճառով Արշակը ստիպւած էր դպրոց գնալ ցնցոտիներով և դաս սովորել ընկերների գրքերի վրայ։

Չընայելով այդ անյաջող պայմաններին, նա ոչ մի օր դասից յետ չէր ընկնում. ոչ մի անգամ վատ թուանշան չէր ստանում։ Վերջապէս վրահասաւ ցրտաշունչ ձմեռը... սար ու ձոր, դաշտ ու հովիտ ծածկւեցին ձեան սպիտակ սաւանով։ Դպրոցի դրեթէ բոլոր աշակերտներն էլ միջոցներ էին ձեռք առել ցրտից պաշտպանւելու համար... Մէկը հաստ վերարկու էր հագել, մի-ւսը կրկնակոշիկ, երրորդը ձեռնոցներ և այլն։

Մի այլ խեղճուկ Արշակն էր հագել իր ամառւայ ցնցոտիները։ Իւրաքանչիւր օր, վաղ առաւօտեան նա զոհդողալով և սաստիկ ցրտից ատամներն իրար խփելով՝ գալրոց էր վազում, որպէս զի այս կամ այն ընկերից գիրք խնդրէ և դաս պատրաստէ։ Բայց նրա մանկական քնքոյշ կազմւածքը երկար տանել չըկարողացաւ այդ չարքաշ կեանքը, նա երկար չըդիմացաւ ձմռան ցրտին ու սառնամանիքին և վերջապէս մի օր սաստիկ մրսելուց հիւանդացաւ և անկողնում պարկեց... Բայց ինչ էր նրա անկողինը...—Երկու կեղտոտ փալասներ, իսկ բարձի տեղ շորերն էին ծառայում... Արշակը օրէցօր վատանում էր ու հալ ու մաշ լինում։ Չըկար մայր, որ իր կաթոգին սիրով խնամք տաներ թշւառ որդու վրայ, չը կար հայր, որ իր ներկայութեամբ թեթևացներ նրա ցաւը, վերջապէս չըկար ո՛չ քոյր, ո՛չ եղբայր։ Փոքրիկ հիւանդի միակ խնամատարը նրա հօրեղբոր կինն էր, բայց նա էլ հազիւ էր կարողանում տան գործերը կատարել, իր սեփական որդիներին կառավարել, ուստի և առանձին ուշադրութիւն չէր դարձնում Արշակի վրայ։

Մի երկու անգամ հիւանդին՝ այցելութեան եկան ուսուցիչները և ընկերները, բայց քիչ ժամանակից յետոյ բոլորն էլ մոռացան նրան, բացի մէկից։ Այդ մէկը Արշակի ընկեր Տիգրանն էր, որ Հարուստ ծնողների որդի էր։ Նա ամեն օր ճաշից յետոյ գալիս-նստում էր Արշակի մօտ, գրքեր կարդում, նոյն օրւայ դասերի մասին խօսում, դպրոցական ու ընկերական կեանքից հետաքրքիր պատմութիւններ անում և այդ բոլորով մխիթարում ու զբաղեցնում որբացած հիւանդին։ Արշակի ցաւերը կարծես թեթևանում էին Տիգրանի ներկայութեամբ և երբ Տիգրանը հեռանում էր նրա մօտից տուն գնալու համար, Արշակը միշտ արտասուքը աչքերին կրկնում էր.—«Տիգրան ջան, ի սէր Աստուծոյ վաղն էլ եկ..»—Իսկ երբ հետևալ օրը գալիս էր Տիգրանը, Արշակը փաթաթւում էր նրա վզովը, համբուրում և չափազանց ուրախանում։ Այդպէս շարունակւեց մօտ տասն օր։ Վերջապէս մի օր Տիգրանի մայրը հարցրեց.—«Տիգրանիկս, ասա՛ ինձ, ճաշերից յետոյ ո՞ւր ես գնում և ի՞նչ ես անում»։ Տիգրանը պատասխանեց.—«Մայրիկ ջան, ես գնում

եմ ընկերոջս-Արշակի մօտ, նա այնպէս հիւանդ է և անտէր։»

—«Բայց դու ինչով ես կարողանում նրան միխիթարել ու օգնել։»

—«Նա չափազանց ուրախանում է, երբ գնում եմ և եթէ, սիրելի մայրիկ, թոյլ տաք ինձ գիշերներն էլ նրա մօտ մնալ, յոյս ունիմ, որ նա շուտով կ'առողջանայ։

—«Չատ լաւ—որդիս, եթէ քեզ նեղութիւն չի լինիլ և եթէ քո ներկայութիւնը ցանկալի է հիւանդին, գնա, միայն զգոյշ կաց, որ դու ինքդ էլ չը հիւանդանաս։»

—«Չատ ու շատ շնորհակալ եմ, բայց դեռ մի բան էլ ունիմ խնդրելու։»

—«Ասա, ինչ է»։

—«Իմ շապիկներից մէկը տուր տանեմ Արշակին, նրանը այնպէս հին է և մաշած»։

—«Որդեակ իմ, շատ ուրախ եմ, որ դու այդպիսի բարի սիրտ ունիս, այդ խնդիրդ էլ կրկատարեմ և բացի դրանից ահա քեզ փող, որպէս զի հիւանդի համար հարկաւոր դեղերը գնես։»

Այդ խօսքերն ասելով մայրը տւեց Տիգրանին մի րուբլիանոց, համբուրեց ճակատը և աւելացրեց.—«Գնա, որդիս և միշտ իմացած եղիր, որ իւրաքանչիւր մարդ պարտաւոր է օգնել ոչ միայն իր ընկերին կամ ծանօթին, այլ և օտարին ու անծանօթին»։

Տիգրանը, չափազանց ուրախութիւնից վեր—վեր թռչկոտելով, վազ տւեց դէպի Արշակենց տունն և պատմեց ամեն ինչ։ Արշակը թէև սրտանց ուզում էր, որ Տիգրանը միշտ իր մօտ լինի, բայց նրան շատ նեղութիւն չըտալու համար հակառակւեց նրա ցանկութեանը։ Սակայն Տիգրանը իր որոշմանը հաստատ մնաց և հէնց այդ գիշերւանից տեղափոխւեց Արշակի մօտ քնելու։

Դրանից յետոյ Տիգրանը իր բաժին կերակուրն ու մրգեղէնը ամեն օր բերում էր և Արշակի հետ միասին ուտում։ Չատ գիշերներ նա անքուն աչքերով հսկում էր, որ Արշակը չըբացւի և չըմրսի։

Տիգրանի այդ նոր տեսակի հիւանդապահութիւնը տւեց

մի շաբաթ և վերջապէս Արշակը բոլորովին առողջացաւ։ Նա ջղլտէը ինչպէս արտայայտէր իր երախտագիտութիւնը դէպի Տիգրանը և շարունակ կրկնում էր—«այսուհետև իմ ամբողջ կեանքը Տիգրանին է պատկանում, որովհետև նա միայն ազատեց ինձ մահուան դրկից։»—իսկ Տիգրանը իր վարմունքին ոչ մի նշանակութիւն չէր տալիս և ասում էր.—«Իմ արածը մի չնչին բան էր...»

Շուտով այդ ամբողջ եղելութեան մասին լսեցին թէ աշակերտները և թէ ուսուցիչները։ Դրանից յետոյ աշակերտները առանձին յարգանքով էին վարւում Տիգրանի հետ, շատերն էլ իրանց մէջ որոշեցին յարմար դէպքում հետևել նրա տաճ դեղեցիկ օրինակին, իսկ ուսուցիչներն ասում էին.—«Եթէ այդ հասակում այդպիսի բարեսրտութիւն է ցոյց տալիս, հապա ինչ կանէ՝ երբ մեծանայ։»—

Ե. Թ.

* * *

Պալարուն դաշտում, սիրուն մարգերում երգում էի, երգում...

Հաւաքում էի փոքրիկ ծաղիկներ ու փնջեր կապում.
Արփին ժպտում էր, թռչուններ ճախրում, բզզում էր մեղուն.
—Անմեղ էր հոգիս, անգիտակ վշտին, լոկ սիրով զեղուն...
Եւ երգում էի ու երգիս լսում. նրա ծաղիկներից
Փնջիկներ ինչսում: Մատաղ օրերումս երգում էի, երգում...

Նա եկաւ, չճանաչ, անմման ոգին... Ոդից յայտնուեցաւ...
Թեթեւցաւ մեղմիկ երգս լսելու, բայց նա կտրուեցաւ.
Ուզեց հոտոտել ձեռիս ծաղիկներն, բայց ձեռս ցնցուեց,
Փնջիկը ընկաւ եւ չար զեփիւռը նրան իսկոյն գրեց:
Իսկ նա... գնաց, գնաց, տխուր, գլխակախ...

Ամայի դաշտում լերկ ժայռին յենուած լալիս եմ, լալիս...
Արեւը էլ չըկայ, թռչնիկներն փախան, մեղուն չի գալիս.
Յուրտ է... դողում եմ... ամպամած երկինքը մաղում է անձրեւ,
Կծկւում եմ, պեղմտում... կարծես կրծքիս տակ սողում են օձեր...

Դառն հառաչում եմ եւ արցունքներիցս սիրոյ վշտերի
Փնջիկներ ինչսում: Օ՜ այժմ ես անվերջ լալիս եմ լալիս...

Գ. ԳՕԼՕՃԵՆՆ

Վիեննա.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԲՈՒՍԱԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

X. ՎԱՐԴԻ ՓՈՅԲԵՐԸ

Նկատելով մասրի թուփը արդէն ծաղկած, ես կտրեցի նրանից մէկ մեծ ճիւղ:

—Ողջոյն ծաղիկների թագուհուն, ասաց Ալէքսան ապերը, որովհետև դա ոչ թէ միայն համարւում է ամենազեղեցիկը, այլ և ունի մօտիկ ազգակցութիւն մի մեծ թիւ բոյսերի հետ, որոնք շատ օգտակար են մարդուս:

Պէնք իսկոյն կրճատօթանանք տոհմի գլխաւոր բնաւորութեան հետ, թէև մի քանիսի մէջ դա փոփոխւում է: Առաջ առաջ մի կոկոն, որ ունի միայն հինգ բաժանմունք, թէև երբեմն բաժանմունքի թիւը լինում է տասը և շատ սակաւ հնգից պակաս: Այդ բաժանմունքները լինում են միշտ հաւասար կամ կրկնակի թերթերի թւի հետ, որոնց թիւը համարեա միշտ հինգ է լինում: Այդ թերթերը,—և այս տոհմի ամենաորոշ նշանն է,—փոխանակ որ կպած լինեն, ինչպէս շատ ուրիշ ծաղիկների մէջ, ձւարանին կամ վերևից կամ ներքևից, միշտ միացած են պարանոցի մօտ, այսինքն կոկոնի բերանի

մօտ, ինչպէս և առէչքները, որոնք երբեմն տասներկուսից պակաս են լինում, բայց շատ յաճախ այնքան, որ չի կարելի հաշուել:

Նոյնպէս հաստատապէս չի կարելի ոչինչ ասել վարսանդի թւի մասին, ոչ էլ ձւարանի ձևի և դասաւորութեան մասին, որովհետև այդ ձւարանը մերթ դառնում է մսալից պտուղ մի

Կ ե ռ ա ս ե ն ի.

հատ կորիզով, ինչպէս դեղձը, սալորը, կեռասը, ծիրանին, կամ հինգ սերմիկով, ինչպէս խնձորը, տանձը, կամ անթիւ հատիկներով, ինչպէս լիճամորին, մորին, մոշին,—մերթ նա դառնում է մի ժողովածու չոր հատիկների, ինչպէս ցիրանցին,

որովհետև վերև չիշած բոլոր բոյսերը՝ թէ հասարակ խոտեր թէ մեծ ծառեր, քոլրեր են կամ մօտիկ ազգակիցներ քո բերած վարդին։ Դրանց բուսաբանները կոչում են *վարդենիներ*։

—Վարդ էք ասում, Ալէքսան ապեր, ո՞րն է վարդը։

Ապա այդ մասրին ոչ այլ ինչ է եթէ ոչ իսկական վարդը իր բնական կամ ինչպէս առ հասարակ ասում են վայրենի դրութեան մէջ. որովհետև մօտաւորապէս նոյնն է, ինչ որ վարդը բուրաստանում պարտիզպանի խնամատարութեան տակ, թէև մասրին, ինչպէս տեսնում ես, ունի միայն հինգ թերթ, իսկ պարտէզի վարդը մասրից առաջ է եկած և պարտիզպանի հոգատարութեամբ շքեղացել և իրաւամբ ստացել ծաղիկների թագուհի անունը։ Կարծում են, աւելի լաւ է, որ դա այդպէս է դառել, թէ չէ ինչ տեսք կարող էր ունենալ մի ծաղիկ, որի մէջ գոնուում լինին անթիւ առէջքները, որոնք պարտիզպանի հոգատարութեամբ փոխարկուած են թերթերի։ Երբեմն մինչև անգամ բոլոր առէջքները դառնում են թերթեր և այն ժամանակ ծաղիկը սերմեր չէ տալիս։

—Վա՜հ, դուշեցի ես, այդ ինչու համար, Ալէքսան ապեր։

—Ես հէնց ուզում էի, որ դու ինձ առաջարկես այդ հարցը։ Դու պէտք է լաւ մտածես, որ բոլոր զանազան մասերը, որոնցից կազմուած է ծաղիկը, առանց պատճառի չեն դրուած այնտեղ և ահա թէ ինչ են դտել։ Երբ, գարնան, դու տեսնում ես շատ ծաղիկներ խնձորենու վրայ, քեզ ու քեզ բնականապէս ասում ես, թէ այդ ծառը աշնան կըտայ շատ պտուղներ։ Ուրեմն ծաղկափթթուելիւնը քեզ իմաց է տալիս պտղի մասին։ Դու իւրաքանչիւր բոյսի մէջ տեսար մէկ կամ շատ ձւարաններ, որոնք տանում են մէկ կամ շատ վարսանդներ և որոնք դառնում են զանազան ձևի պտուղներ։

Սակայն ինչու համար են այդ վարսանդները, որոնք դուրս են գալիս ձւարանից պսակի միջով առ հասարակ իրանց պարզ կամ երկճիւղ ծայրը ցոյց տալու համար... ինչ են անում նրանք այնտեղ։ Իսկոյն քեզ այդ կասեմ։

Այն օրից երբ դու ուշի ուշով քննում էիր առէջքները, պէտք է նկատէիր, որ նրանք ունին փոշու կամ ալիւրի նման մի բան, որ կպչում է մատներին, երբ նրան ձեռք ես տալիս։

Դրան բուսաբանները հենց *ծաղկափոշի* են անուանում: Շատ լաւ. որպէս զի ձւարանի սերմիկները դառնան պտուղ, հարկաւոր է որ առէջքների այդ փոշուց մի փոքր մաս կպչի վարսանդի ծայրին, որ միշտ ունի հաղորդակցութիւն ձւարանի սերմիկների հետ և որ սակայն համարեա միշտ ծեփւած է մեղրանման մածուցիկ հիւթով, որը և պահում է փոշին: Ահա թէ ինչ բանի համար են ծառայում առէջքները կամօք Նրա, որ ստեղծեց և կազմակերպեց այս զեղեցիկ բանները:

Զանազան ծեւի ծաղկափոշիներ.

Այդպէս ուրեմն եթէ առէջքները չլինեն այլ ևս այնտեղ վարսանդին փոշի տալու համար, սերմիկները մեռած կըմնան և կ՚ոչնչանան ձւարանի մէջ: Եթէ լինեն էլ այնտեղ, այնուամենայնիւ առէջքների փոշին կարող է չընկնել վարսանդի վրայ, որովհետև շատ անգամ դրանք վարսանդից աւելի բարձր են զետեղւած:

Այս դէպքում Մեծատաքանչ Ճարտարապետն, որ ամեն բան կարգի է դրել, ասում է քամուն «փչիր» եւ քամին փչեց ու քշեց առէջքների փոշին վարսանդի մեղրաման հիւթի վրայ. նոյնպես Արարիչն Աստուած ստեղծեց երկրիս վրայ անթիւ միջատներ, որոնք այդ մեղրահիւթը ծծելու—կամ կրելու համար այցելում են ծաղիկներին. այցելելով նրանց, թաւալւում են առէջքների փոշու մէջ և յետոյ անցնում են վարսանդի վրայ որ և թափում են կրած փոշին: Այդ օգտակար պարտականութիւնը նրանք աւելի լաւ են կատարում, քան քամին: Այսպէս ուրեմն, երբ մենք այս մասին հշուադատում ենք, երբ հիանում ենք պտակի զեղեցկութիւնից, երբ շնչում ենք անուշ հոտը, կարծում ենք թէ նշանակւած է մեր աչքերի հաճոյքի և մեր հոտոտելեաց համար, գալիս ենք այն գիտակցութեան, որ այդ զեղեցկութիւնը, այդ անուշահոտութիւնը իսկապէս միջատներին գրաւելու համար են, որպէս զի սրանք իրանց կարևոր այցելութեամբ կարողանան կպցնել առէջքների փոշին վարսանդի մեղրահիւթին:

Ե. Փ.

Մեր պատկերները

I

ԵՐԱՆԻԿՆԵՐ

Երկու աղջիկ, մի տղայ, շունն էլ իր շնիկներով այնպէս են զբաղած մէկը միւսով, որ կարծէք ընտանեկան մի երջանիկ տօն կատարելու համար խորհրդի լինեն հաւաքւած։

Շատ մանկավարժներ օգտակար են համարում սենեակներում երեխաների դաստիարակութեան համար տնային կենդանիներ պահել։ Սրանք էլ Նախախնամողից որոշ չափով ստացել են խելք, մանաւանդ երբեմն աւելի շատ, քան մարդը։ Նրանք զգայուն են, հաւատարիմ, խնդակից և վշտակից իրանց մերձաւորներին։

II

ՊԱՏԾԻԱՆ ՍԻՐԱՆՈՅՇԸ

Ամբողջ տօները Սիրանոյշը անդ է կացրել խաղով և այստեղ այնտեղ՝ տօնածառներին՝ պարելով։ Նրա դաստիարակչուհին մի շատ խիստ կին է։ Սկի չի կամենում հաշտւել այն մտքի հետ, որ Սիրանոյշը դեռ շատ է փոքր, աւելի շատ նա պէտք է վազվզէ, խաղայ, մանաւանդ տօն օրերին, քան բերան անէ, մի ինչ որ, իրեն բոլորովին անհասկանալի լեզւով ոտանաւոր։ Դաստիարակչուհին կամենում է, որ աշակերտուհին անպատճառ լաւ արտասանէ այդ ոտանաւորը գիւնազիայի տեսչուհու մօտ, որ այսօր ճաշին Սիրանոյշենց տանն է լինելու։

Հակառակի պէս տեսուչուհին ճաշից առաջ եկաւ Սիրանոյշի մօր մօտ ներողութիւն խնդրելու, որ անակընկալ պատճառներով այսօր նրանց մօտ չէ ճաշելու։

Դաստիարակչուհին իր սանին ներկայացրեց տեսչուհուն և պահանջեց ոտանաւորը արտասանել նրա ներկայութեամբ։ Սիրանոյշը շըշկըլուեց, շփոթւեց, չկարողացաւ իրեն անհասկանալի ոտանաւորը թութակի պէս ասել։ Տեսչուհին գոհ չմնաց Սիրանոյշի դաստիարակչուհուց և երբ նա գնաց պրծաւ, խստասիրտ մանկավարժուհին Սիրանոյշին պատժեց, չոքեցնել տւաւ մանկանոցում, դուռը դրսից փակեց և առանց ճաշի թողեց նրան։

Սիրանոյշին չի դաւճանել միայն իր նազելի տիկնիկ-Աննիկը և նա էլ է չոքել իր տիրուհու կողքին, բաժանելով նրա վիշտը։

Սիրանոյշը ձեռքերը բարձրացրած, կարծէք աղօթելիս լինի, բայց ոչ, նա իրեն անհասկանալի ոտանաւորն է կրկնում, աչքերը դռան գցած, թէ երբ պէտք է բանան և ազատեն իրեն բանտից։

III

ՉԻՆԱԳՆԴԻ

Ծննդեան արձակուրդին N ուսումնարանի Ե. և Բ. դասարանի աշակերտները երկու բանակի բաժանւած, բաւական թւով ձիւնագունդ են շինել և հրաւիրել Գ. դասարանի աշակերտներին իրանց դէմ կռւելու։ Որոշած օրը բոլորեքեանք էլ ժողովւել էին դպրոցի ընդարձակ բակը և Ա. ու Բ. դասարանի աշակերտները կանխաւ միութիւն կազմած, շրջապատեցին Գ. դասարանի աշակերտներին ու բաւական երկար ժամանակ նրանց ռմբաձոճեցին։ Հաշտութիւնը կայացաւ որոշ պայմաններով։

Ձիւնագնդի խաղը ծննդեան տօներին շատ ընդհանրացած է մանաւանդ այն երկիրներում, ուր ձմեռը առատ ձիւն է լինում։

ԶԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1) Առաջ. Յ. Բաբախանեանի.

Մի բառ գիտեմ, երեք տառից,
Ինքը շատ մեծ ողջ աշխարհից,
Բայց առաջին տառը եթէ պոկենք
Եւ նրա տեղ վ տառ դնենք,
Անշուշտ վերջը մի օդտաւէտ
Կենդանու անուն կ'ըստանանք:

—

2) Առաջ. Նոյնի.

Աղբիւրի ամեն Համարում
Երեք վանկից մի բառ կայ,
Եւ այդ բառը Համարեա միշտ՝
Սիրելի է մանուկներին.
Եթէ դուք հեշտ գտնել ուղէք,
Այս Համարը լաւ կարդացէք:

—

3) Առաջ. Ն. Բաբուրեանի.

Ուզած բառս է թւանշան,
Ձորս տառերից է բաղկանում,
Սկզբի տառը եթէ բաժանես,
Իսկոյն կըգտնես դպրոցում:

—

4) Առաջ. Լորիկի.

Այն ով է, թէև մեծ ատամներ ունի, բայց չի կծում։

—

5) Առաջ. Նոյնի.

Նստած են կատուները, իւրաքանչիւրի դիմաց երկու կատու։ Իմանալ քանի՞ կատու կայ։

6) Առաջ. Սեդրակ Ս.-եանի.

Մի բառ գիտեմ երկվանկանի
Գտնել նրան շատ հեշտ կըլինի,
Լոյս աշխարհ նա մտնելից
Կրկոչւի մինչ տասներկու տարի։

—

7) Առաջ. Նոյնի.

Մի բառ գտէք մի վանկանի,
Ամբողջ աշխարհին պիտանի.
Ով մանուկներ, որ գտնել ուզէք,
Դէպ անտառը վազեցէք,
Ապա վեց ցրած վերադարձէք,
Փ տառը նրանից հեռացրէք,
Որ ձեր դէմքի վրայ նրան գտնէք։

—

ԹԻՒՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

8) Առաջ. Երամ Մեհրաբեանի.

Երկու քոյրեր՝ Անահիտը և Հեղինէն իրար հանելուկները էին առաջարկում. ինչ որ մեծ քոյրը՝ Անահիտը առաջարկում էր, փոքրիկ Հեղինէն այն րոպէին վճռում էր։ Մի անգամ փոքրիկ Հեղինէն կտրելով Անահիտի խօսքը, ասաց.

—Քոյրիկ, բաւական է ինչքան որ դու առաջարկեցիր, հիմա ես կ'առաջարկեմ, դու վճռի. և սկսեց.—երեք եղբայր քաժանւում էին դրանք ունէին 30 ոչխար, այդ երեսուն ոչխարը ծնել էին գառներ, որոնցից 10-ը ծնել էին ամեն մէկը մի մի գառը. 10-ի ամեն մէկը երկու երկու գառը, իսկ մնացեալ 10-ի ամեն մէկը երեք երեք գառը։ Հիմա պէտք

է այդ գառները և ոչխարները երեք եղբօր մէջ այնպէս բաժանել, որ գառը մօրից չ'ընկնի և մայրը գառից:

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Մեր սև շունը պառկել ա սև սեան տակը,
Երթամ պագեմ մեր սև սեան ճակատը:

ԱՐՋԵՐԻ ՈՐՍԸ

Ալի որսորդ գնացել էր անտառ, արջեր որսալու: Նա մենակ էր և Հեռը վերցրել էր միայն Հրացան և իր Հաւատարիմ շուն *Բողարին:*

Որսորդը ման եղաւ առաւօտից մինչև իրիկունը, բայց ոչ մի արջի չըպատահելով, ծառի տակ նստեց փոքր ինչ Հանգըստանալու: Հրացանը կողքին դրեց, իսկ ոտների մօտ պառկեց Հաւատարիմ շուն *Բողարը:*

Անտառում ամեն ինչ Հանդարտ էր և միայն Հիւսիսայինն մեղմ զեփիւռն էր փչում: Ախորժելի էր մի փոքր Հանգստանալ, ամբողջ օրւայ շոգից: Որսորդը թեքւեց ծառի տակ և լսում էր երեկոյեան թռչունների երգը, որոնք Հաւաքւած էին ծառի վրայ:

Արդեօք շատ ժամանակ անցաւ,—յայտնի չէ: Բայց որսորդը յանկարծ լսեց մի ինչ որ աղմուկ և իրարանցումն. և քանի գնում, այնքան աւելի և աւելի էր մօտենում: Ձայն Հանողները ահագին արջեր էին, որոնք իր շուրջն էին վազում: Յանկարծ՝ անտառի մէջ, որտեղ նստած էր որսորդը, ծառի տակ, միանգամից դուրս թռան վեց ահարկու արջ:

Որսորդը ոտքի կանգնեց, կամենում էր վերցնել Հրացանը. Բայց Հրացանը իրանից առաջ վերցրել էր ամենամեծ արջը: Որսորդը կանչեց իր Հաւատարիմ շուն *Բողարին,* բայց *Բողարին* մի ուրիշ արջ, իր թաթերի մէջն էր առել և թոյլ չէր տալիս իր տիրոջն օգնելու: Որսորդը մտածեց փախչել: Բայց բոլոր արջերը միանգամից դոռացին.

—Բռնեցէ՛ք դրան, բռնեցէ՛ք:

Չէնց այդ րոպէին՝ երկու մեծ և ահագին թաթեր, բըռ-

նեցին նրան յետևից և չէին թողնում, ոչ տեղից շարժւելու և ոչ էլ գետին պառկելու:

Նրա գլխարկը յափրշտակեցին և ամենափոքրիկ արջը վերցնելով այդ, ծառի տակ տարաւ ու այնտեղ պատառ-պատառ արեց:

Դրանից յետոյ մեծ արջերը գոռացին.

—Ա՛յ, հէնց դա է ամենաքաջ որսորդը: Ահա տեսնում էք թէ ո՛վ էր ուզում մեզ որսալ և կենդանի-կենդանի բռնել, իսկ այժմ, մենք ենք բռնել նրան և նա մեր որսն է: Մա՛հ, մա՛հ դրան, մահ դարանամուտին:

Որսորդը աչքերը վեր բարձրացրացրաւ և տեսաւ որ ամենամեծ արջը, որ վերցրել էր իր հրացանը, այժմ մի քանի քայլ հեռու է կանդնել և հրացանը ուղղել է իրան:

—Սպասե՛ր դրան, գոռացին արջերը, մի լաւ խփէր, որ սրտներս հովանայ է...

Նա գցել չըզլտէր, թէ արջն էր այնպէս խաղաղացնում կամ թէ որսորդն էր ծարսափահար եղել և վախից աչքերին այդպէս էր երևում, միայն թէ շատ երկար տևեց այդ գոր-ծողութիւնը:

Արջը աշխատում էր հրացանը լաւ բռնել իր ահագին թաթերով, բայց չէր կարողանում: Իսկ այն արջը, որ բռնել էր որսորդին, չէր թողնում, որ գետին ընկնէր ու ինքն աւելի ու աւելի ուղղում էր դէպի հրացանի բերանը և երբ նա կամենում էր փախչել, յանկարծ հրացանը պայթեց... Որսորդը արթնացաւ:

Այս բոլորը նա երազումն էր տեսնում:

Թարգմ. ՀԱՅՐ. ԲՆԲՈՒՐԵԱՆՑ

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го января 1897 года.
Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.

ՏԱՐԻ 55-ՐԴ **ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԷՍԱՐԱՆ** ՏԱՐԻ 55 ՐԴ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ.—ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ.—ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

«ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԷՍԱՐԱՆ», կը հրատարակէ նոյն ծաւալով, աւելի ճոխ և հետաքննական նիւթեր մատակարելով իւր ընթերցողաց։

Տարեկան գինն է 10 փռանկ, (4 ռուբլի—2 դոլար), կանխիկ վճարելի։

Դործակալութեան եւ բաժանորդութեան պայմանք ինչ ինչ փոփոխութիւններ կրելով, որոնք որ կրնամ գիտել՝ պէտք է ուղղակի առ մեզ դիմեն, և կամ կարդան Ա թուոյ 3 էջը։—Մեր հասցէն է հետեւեալն՝ Խմբագրութիւն հանդիսի Վենետիկ, Ս. Ղազար, իսկ Գաղղ. այսպէս՝ Bureau de la Revue «BAZMAVEP» St. Lazare —Venise (Italie).

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ“

1897 ԹԻՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

«Հանդէս Ամսօրեայ» ուսումնական թերթը կը մտնի իր գոյութեան 11-րդ շրջանը և կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը՝ նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ «Հանդէս Ամսօրեան» պահելով հանդերձ նոյն ծաւալն որ է երկու մեծադիր թերթ, պիտի բովանդակէ այն ամեն հետաքրքրական, հմտալից յօդուածներն, որ կը հայթին հայ գրականութեան։

Տարեկան գինը Աւստրիոյ մէջ 4 ռուբլի։

VIENN (Autriche), Rédaction de la Revue „HANTESS“
VII/2, Mechitharistengasse

IX ՏԱՐԻ **„ՄՈՒՐՃ“** ՏԱՐԻ IX

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

«ՄՈՒՐՃ» *ամսագիրը* **1897** *թուականին կը հրատարակուի նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին ութ տարիներում։*

«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝ I. Յօդուածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին։ II. Վէպեր և պատմուածքներ՝ ինքնուրոյն և թարգմանական։ III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական։ IV. Նկարագրական-ճամբորդական։ V. Պատմական։ VI. Գիտական հանրամատչելի յօդուածներ։ VII. Յօդուածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին։ VIII. Գրական-քննադատութիւն։ IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին։ X. Ժամանակակից Տեսութիւն։ Յօդուածներ հայկական կեանքի ընթացիկ խընդիրների մասին։ XI. Գաւառական նամակներ. XII. Թատրոնական քրոնիկ և քննութիւններ։ XIII. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից։ XIV. Կարեւորագոյն լուրեր ամսեայ եղելութիւններից։ XV. Տեղեկատուներ և յայտարարութիւններ։

«Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։ Կարելի է գրւել գործակալ-աշխատակիցների մօտ, ստանալով նրանցից անդորրագիր։

ՎՃԱՐԸ կարելի է նաև մաս-մաս՝ 3 ռուբլի սկզբում, 3 ռ. ևս մինչ մարտի 1-ը, մնացածը մինչև յունիսի վերջը։

Դիմել Խմբագրատունը—Тифлисъ, въ редакцію «МУРЧЪ».

Արտասահմանից—Tiflis, Rédaction «MOURTCH»։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

XV ԱՂԲԻՒՐ XV *1897* VIII ՏԱՐԱԶ VIII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար։

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար։

Ն Պ Ա Տ Ա Կ

ԱՂԲԻՒՐԻ նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է դիմութեան, ինքնահաւանչութեան, անվեհերութեան սերմեր։

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտուն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը։

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարդացած, եղբայրսիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել։

Ե Ր Ա Գ Ի Ր

Աղբիւրը լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 №№։

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն։ Գիտութիւն եւ արուեստ։ Նոր լուրեր. Այլ եւ այլք։ Զարմանալիք, Մանկական, Փրեօբէլեան, շախմատի եւ այլ խաղեր, Րեբուսներ, Թւաբանական խնդիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Երգեր նոտաներով։

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ եւ տեղեկութիւններ։ Առաջարկութիւններ։ Խորհուրդներ։ Մատենախօսութիւն եւ նոր գրքեր։ Խառն լուրեր։ Պատասխաններ, Յայտարարութիւններ։

Տարազը լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ. տարեկան 48—50 №№։

Գեղարուեստ եւ գիտութիւն։ Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական գրուածքներ։ Հանաստեղծութիւն։ Քննադատութիւն։ Կենսագրութիւն։ Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ։ Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն։ Ճանապարհորդութիւն եւ արկածք։ Երաժշտութիւն եւ Թատրոն։ Լուրեր, տեղեկութիւններ։ Ցօդուածներ եւ այլն։ Փելիետօն, ծաղր, առած եւ կատակ։ Շախմատի եւ այլ խաղեր, Րեբուս։ Հարցեր, խորհուրդներ։ Այլ եւ այլք։ Սուրհանդակ։ Յայտարարութիւններ։

Աղբիւր-Տարազի համբագրութիւնը անմիջական և սերտ յարաբերութիւն ունեւ. Նալով Եւրոպայում կիրշէ պատրաստող նշանաւոր գործարանների հետ, արդէն կարելի է դարձրել բաւական արագութեամբ տպագրել օրւայ հարցերի, դէպքերի հետ համարեա զուգընթաց և նրանց վերաբերեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ։ Բայլ այն՝ որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բեւեռիստիկայից, պակաս էջեր չեն զարդարում և կրիտիկական յօդուածներով։ Խեղարեստն ու գիտութիւնը Տարազում ընդարձակ տեղ են բռնում. Նրանք քաղւում են և կազմւում հաւատարիմ աղբիւրներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով։

Աղբիւր եւ Տարազ *միեւնոյն հասցէով* 1897 *թ. ստորագրողը իրաւունք ունի* 1 *ր. ուղարկելով ճանապարհածախս՝ ստանալ* Տարազի № 1-ի հետ. 1) *Միքայէլ Նալբանդեանի (իսկական եւ վերջին ֆոտոգրաֆիայից) մեծադիր գրաւիւր,* 2) *Մայրիկի ննջարանում, շքեղ խորհ.,* 3) *Յարեմի աղջիկ, օլիօգրաֆիական պատկերները։*

Բայլ այդ իւրաքանչիւր ամիս եւ Պարիզի մօգաներ։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.) ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.)։

Հասցէն՝ Редакція „Агбюръ“ կամ „Таразъ“ Тифлисъ. Rédaction des journaux „Agbur“ et „Taraz“ Tiflis (Caucase).